ճառականութեամբ, ձեռնարկեք ունենալ մի փոքրիկ անչուք եկեղեցի և մի քահանայ. Իրանք գործ են ոչ միայն մայրենի լեզուից, ինչպես ամբողջ Վրաստանի և Իմերխեթի հայերը, այլ և գաղափար չունեն ոչ լեզուի և ոչ ազգութեան մասին։ Վերջապէս նորերումս լսեցի հայտնա ազգիւրներից, որ այդ խոպան մոռացված խեղճ համարիչ եղբայրներիս ու քոյրերիս կենաց քարոզման մասին մտածել է ազնուասիրտ և գթառատ գնդապետ պ. Ա. Մէլիք-Հայկազեանը, որպէս զի գարմանել թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս տգիտութեան խաւարի մէջ խորասխող չխարեցոց խեղճ մանկանց։ Պ. Մէլիք-Հայկազեանը խոստացել է ամենայն տարի տալ ուսուցչի ռոճիկ, ուղարկել ուսումնարանական պարագայք և վարձել ուսումնարանի համար մի չինովնիկի մինչև նորի կառուցումը իսկ կարծիքով նեղ մտաւորապէս հաշուենք ուսումնարանի ծախսը՝ ամենաքիչը կը հասի 400 ր.։ Ուբեմն չխարեցիք խոշոր տառերով պիտի գրուշուած պահեն իրանց պատերում պ. բարերար անունը։ Յանկալի կը լինէր որ մեր հայ կրթոսոնները օրինակ առնէին պատուելի գործառնութիւնից և իրանց անուամբ մի մի ուսումնարան բանային հայ գիւղերում իրանց գրամական օգնութեամբ։ Պէտք է յիշել այստեղ Զմյուրի արժանապատիւ տէր Նիկիչ Գափամաճեանի ապրիլանութիւնը, որ պակաս չէ աշխատասէր այդ ուսումնարանի բացման համար։ անցեալ տարի մենակ ինքն հայր Գափամաճեանը ձրի էր դասախարատում տեղացոց մանկանց բան իր կարողութեանն։ Արդեն ուրախ կը լինենք մենք էլ պ. Մէլիք-Հայկազեանի հետ, երբ մեզանից գտնված և Իմերխեթի մի խուլ անկիւնում բնակվող ազգայիններս երեք կամ չորս տարուց յետոյ իրանց մայրենի լեզուով կը խոնարհեն մեզ հետ։ Ցոյս կայ որ այդ գործարարութիւնը և աշխատութիւնը ունայն չանցնի։

Վերջացնելով նամակս, ասելացնում եմ սրա վրա մի հարևտը և աշագրութեան արժանի խնդիր։ Ամենքիս լաւ յայտնի է, որ ամբողջ Իմերխեթի մայրաքաղաքն է Քութայիս և չրջապատող գիւղերի արդիւնարերութիւնը ամեն օր այտուել են բերում, որովհետև էլ պակաս կը լինի, կենդանին էլ։ Այն ինչ չունեն մի հիւանդանոց (лечебница) որ կենսական առօրեայ խնդիրներից ամենանշանաւորն է։ Զարմանալի բան, ինչու քաղաքային վարչութիւնը կամ նոյն իսկ պ. պ. բժշկապետները չեն ի գլուխ անում այդ աստուածահաճոյ գործը։ Ես ինքս չատ անգամ տեսել եմ հիւնց քաղաքիս մէջ ապրողներից, որ գրամական պակասութեան պատճառով մի քեթի ցաւի համար ամիսներով մաչել են անկողինը։ Այն ինչ, փառք Աստուծու, մենք ունենք բաւական մասնագէտներ բժշկական գիտութեան։ կը իմդրէի որ այս կարևոր և նուրբ խնդիրս իբրև «ձայն բարբառոյ յանապատի» չը մնայ և մէյ լրագիրներն էլ արձագանք տային։

Օգոստոսի 30-ին, Քութայիսի երկիգիմնազիայի առաջը և ամենանշանաւոր փողոցի վրա պատահեցաւ մի քեթի կռիւ։ Երեսների ընդդէմ մի ձիաւոր իմերխեթի։ Պատճառը այս էր. իմերխեթը չտապով գնում էր իր գիտը. արշաւելիս դիպաւ մի երէայի և վայր գցեց. մյս մասնասկանները տեսնելով իրանց արիւնակցի գետնի վրա թաւալվելը, ձիաւոր իմերխեթի ետեից քարերով ընկան. իմերխեթը իսկոյն սուրը մերկացրեց և երեքին վիրաւորեց. այդ տեսարանը կատարվեցաւ ոստիկանատան մօտիկ։

Սեպտեմբերի 2-ին լոյս տեսաւ վրաց Հերօմաս», աշխատանք, անունով լրագիրը. խմբագիրներն են՝ պ. պ. Գաղեանի և պ. պ. Նազարով. տպագրված է Քութայիսում պ. պ. Յուլոիձիի տպարանում։ Տարեկան գինն է 7. ր. կը երատարակվի չաբաթը մի անգամ։

Ց. Ամիրաղեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 9 սեպտեմբերի

Ձեր պատուական լրագրի էջերի մէջ ներկայ երկտողիս փոքրիկ անկիւն մի չնորհել բարեհաճեք։

Բարեկամական գիշերային պարզ այցելութենէ մը օգուտ քաղելով պարտ անձին համարեցինք հետեւեալ հանգանակութիւնը ընել ի նպաստ ազգային Միացեալ ընկերութեան, ուստի հաճեցեք տալ «25» քան և հինգ րուբլի չնչին լումայն հասցնել ուր որ անկէ է. յիշելով ձեր ազգօգուտ թերթի մէջ տալն նուիրատուաց անուններուն, որոնցից իւրաքանչիւրը տուել է 2 րուբլ, բացի պ. Արամ Գալէկեանից, որ տուել է 3 րուբլ։

Յարտիրոս Սարգսեան, Գրիգոր Սարգսեան, Մաղաքա Սարգսեան, Տիկին Ն. Սարգսեան, Գարապետ Սարաֆեան, Գրիգոր Սարաֆեան, Պետրոս Սարաֆեան, Տիկին Թ. Սարաֆեան, Պետրոս Աստուրեան, տիկին Թ. Աստուրեան, տիկին Մ. Գալեկեանց։

Գումարն քան և հինգ րուբլի ներփակեալ նամակիս մէջ կը տանեաք։

Յարութիւն Սարաֆեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Փորձնել դՕրհան» լրագրի համար տասանգնք 36 րուբլ հետեւեալ անձինքներից Ասատրեանից, Մկրտիչ Ուղլեանց, Սիմէոն Պապովեանց, Պալաստա Աստուրեանց, Յարութիւն Բախչեանց, Դանիէլ Ֆրանգուլեանց, Դաւիթ Շամխարեանց, Սիմէոն Քուրդեանց, Յովհաննէս Կիրակեանց, Յովհաննէս Զամնամխաղեանց, Յարութիւն Թէլէվեանց, Նազարէթ Բոստանճեանց, Իսկ Մօսկվայից Ալէքսանդր Ֆրանգուլեանց։ Առաջվայ փողերի հետ կանի 947 րուբլ։

—

Ստացանք 5 րուբլ Խաժենէր Խաստամնեանից յօգուտ «Փորձնել դՕրհան» լրագրիչ Առաջվայ փողերի հետ կանի 952 րուբլ։

—

Մի Թիֆլիսեցի հայ քահանայ նորերումս պատկել է մի զարթարագրի հայ երիտասարդին մի հայ ազգկայ հետ, Տգան ունէր վկայական որ անպատկ է, Այդ ղարդը պակկունց յետոյ, յանկարծ Զարթարագի կօնսիստորիան իմաց է տալիս որ երիտասարդը արդէն մի անգամ պսակված է Զարթարագում։ Այժմ քահանային տոմսոր իշխանութիւնը պատրաստ է անորոշ ժամանակով Ազբատ, և մի և նոյն ժամանակ տրամայիչ է կարել նրա արդիւնքը, այնպէս որ տէր-հօր բացակայութեան ժամանակ նրա կինը և չորս երեխաները սոված կը մնան։ Քահանան խնդրում է որ նրան քննեն և դատեն։

—

Պրոֆեսոր Վ.իրեսով, որ անտրոպոլոգիական նպատակներով է եկել Կովկաս, գիտաշրութիւն ունի մեր հայ, վրացի և թուրք ազգաբնակութեան գագաթների չափումներ անել։ Վերդիկակասից Թիֆլիս գալու ժամանակ նա օսերի գիւղերում արդէն արել է օս գագաթների չափումներ։ Չափումներ անելու համար պէտք է միասին մի յայտնի քահանայութիւն գիմներին, այդ պատճառով պրոֆեսորը շաս կը ցանկանար գտրոցներում այդ չափումների անելու։ Գպրոցը այն յարմարութիւնն ունի որ նրա մէջ կան տեղակացուցիչներ երկրի այլ և այլ գաւառներին Այդպէս է նկատեան գպրոցը, այդպէս և վրաց սեմինարիան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Վիէննայի մէջ վիրջին ժամանակներում խօսում են, որ աւստրիական կայսրը և կառավարութիւնը կամենում են վերականգնել բարեկամական յարաբերութիւններ Ռուսաստանի հետ և մինչև անգամ, եթէ կարելի է, վերանորոգել երեք կայսրերի դաշնակցութիւնը։ Աւստրիական պաշտօնական „Fremdenblatt“ լրագիրը նկատում է հետեւեալը։ „Ռուսաց կայսրի այցելութիւնը Դանցիգին նոյնքան նշանակութիւն ունի մեզ համար, որքան Գերմանիայի համար, որովհետև մենք ցանկանում ենք պահպանել խաղաղութիւնը և լուծել յարաբերող հարցերը պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ։ Ռուսաստանը միշտ այդ կարծիքի է եղել և մենք յոյս ունենք, որ նա այդ կարծիքին հաւատարիմ կը մնայ։ Մեր պետութիւնը իրան հետաքրքրող բոլոր հարցերը լուծից Ռուսաստանի համաձայնութեամբ։ Չէ կարելի չը ցաւել, որ մի քանի լրագիրներ խօսում են Ռուսաստանի ֆորքականութեան փոխելու և նրա համար սխալական ձգտումների մասին և խօսում են այն ձևով, որ բոլորովին չէ համապատասխանում մեր բարեկամական յարաբերութիւններին ռուսաց կառավարութեան հետ։ Բայց իսկապէս լրագրական այդ յօդուածները նոյնքան կարող են վնասել մեր բարեկամական յարաբերութիւններին Ռուսաստանի հետ, որքան Մօսկվայում և Ս. Պետերբուրգում հրատարակվող պատիանամել լրագիրների յօդուածները։ Երկու կողմերն էլ, կամենալով իրանց երկիրների քաղաքականութեան առաջնորդներ լինել, աշխատում են իրանց կարծիքը ընդհանուր պետութեան կարծիք համարել տալ։ Ոչ մի ցոյց չէ կարող այնպիսի հանգամանքներ առեղծել, որոնք կարողանային խանգարել Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի բարեկամական յարաբերութիւնները, Երկուսեանս քաղաքական հօրիզոնի վրա այնպիսի մի կէտ չէ նշմարվում, որ կարողանար անբարեհանութիւն յարուցանել այն երկու պետութիւնների միջև։ Իսկ այդ երկու պետութիւններից ոչ մեկը չի աշխատի անբարեհանութիւնների առիթ փնտռել, որովհետև երկուսն էլ միջոց են ունեցել փարձել, որ ամենախըճճված հարցերը կարելի է փոխադարձ համաձայնութեամբ լուծել։“

Բերլինի մէջ արդէն ստացված է աւստրիական կառավարութեան շրջաբերականը, որի մէջ ուրախութիւն է յայտնված երկու կայսրների տեսութեան առիթով Դանցիգի մէջ և աւելացրած է, թէ աւստրիական կառավարութիւնը այդ տեսութիւնը մի գրաւական է համարում եւրոպական խաղաղութեան համար։

Ջեհերը մի տրձան կանգնացրին Տեսիտական առաջնորդ Պրօկօպին։ Արձանը Տանդիսով բացվեցաւ սեպտեմբերի 5-ին։ Արձանի բացման ժամանակ գօկսոր գրեթ մի ճառ արտասանեց, որ անդադար ընդհատվում էր պոլիցիական կառավարչից։ Վերջը կառավարիչը հրամայեց ժանդարմներին գցած րուբլ գրեթին ամբիոնից և այդպիսով նրան թոյլ չը տուեց վերջացնել իր ճառը։ Այդ Տանգամանքը չափազանց վրդովեց ներկայ հազորներին, որոնք Տանդատարանի չափաւորների տուած խորհուրդներին չնորհիւ։

ՖՐԱՆՆՍԻԱ

—

Սեպտեմբերի 3-ին Փարիզի մէջ կայացաւ Ֆրանսիական միևիտարների խորհուրդը Այժիրիայի գործերը քննելու համար։ Լսրձում են, որ կառավարութիւնը վճռողական միջոցների կը գիմէ։ „National“ լրագիրը խորհուրդ է տալիս կառավարութեանը թողնել քաղաքական գնդապետներին և զօրքերի կազմակերպութեամբ ըզբաղվել Ֆրանսիայի պատիւը և հեղինակութիւնը Աֆրիկայի մէջ պահպանելու համար։ Հաւատացնում են, որ պատերազմական միևիտար գեներալ Ֆայր վճռել է մի անգամից ուղարկել Աֆրիկա անհրաժեշտ պատերազմական զօրք ապստամբութիւնը մի տարուածով ճնշելու համար։ Նորերումս Տունրնից և Մարսելից ու զարկած Ֆրանսիական զօրքերը մի զօրեղ զօրաժան են կազմում, բայց կառավարութիւնը գրանով չի բաւականանայ, կամենալով մինչև ձմեռ վերջացնել արշաւանքը։ Տունրնի մէջ միևիտարտեղապահի տեղը ժամանակաւորապէս տուած է գեներալ Լօժերօին, իսկ Բուստան Փարիզ է կանչված։ Ինչպես յայտնի է, միևիտարտեղապահ Բուստան Տպատակվում էր պատերազմական գործերի միևիտարին, գրա Տակառակ գեներալ Լօժերօ կը Տպատակվի պատերազմական միևիտարին։ կարծում են, որ Բուստանի վերադարձը Տունրնս բաւական կուշտնայ, որպէս զի պատերազմական քաղաքականութիւնը կարողանայ իր պատգները տալ։ Կառավարութիւնը մեծ նշանակութիւն է տալիս Բուստանի անձնական Տատկութիւններին։ Նրա տատ խորհուրդները հետևելու են։ պէտք է աշխատել բարեկամական յարաբերութիւններ ունենալ թիւրքայ իշխանութեան հետ Տրիպոլիի մէջ, խոտութեամբ յարգել կրգապատի ինքնավարութիւնը և աշխատել Անգլիայի հետ համաձայնութեամբ գործել Արևելեան քաղաքականութեան վերաբերութեամբ առհասարակ և մանաւանդ Միջերկրական ծովի հարաւային ափերի վերաբերութեամբ։

Սեպտեմբերի 1-ին Լաուլետասյի լրենակիչները սարսափած էին, որովհետև այդ օրը հասան մի քանի ձիաւորներ մի օֆիցերի հետ գեներալ կօրրէսպոյի զօրաբաժնից և Տաղորդեցին այդ զօրաբաժնի վատ դրութիւնը Ձիաւորները Տպիւ կարողացան ազատվել աւարներից, որոնք ձմեռ պարհին նրանց շրջապատեցին։ Ֆրանսիացին նաւատորմի հրամանատարը ոտ իջնել Նեղու համար զօրքեր պատրաստեց, որոնք ամբողջ գիշեր հրացանի տակ էին կանգնած։

Տունրնի շրջականերում թափառում են ձիաւոր արաբներ և տեղեկութիւններ են հաւաքում ֆրանսիական զօրերի մասին Մանաւանդ և այլ կէտերի մէջ։ կարծում են, որ ապստամբները կը յարձակվին բէյի մայրաքաղաքի վրա։ „Temps“ լրագրի Թղթակիցը ուշադրութիւն է գարձնում ֆրանսիական զօրքերի սակաւութեան վրա։ „Ա յսպիսի Թոյլ զօրաբաժիններ ունենալուց ասելի վտանգաւոր ոչինչ չը կայ, նկատում է Թղթակիցը։ Ամենափոքր անազդութիւնը կարող է մեզ համար կատաստրոփ լինել, իսկ մենք ինքներս կամաւորապէս մեր անզգուշութեանը նպաստում ենք։ Այդպես չի կարելի շարունակել“։ Տունրնի գիւանագէտները չը Տնարհվեցին բէյի Տրամանին ֆրանսիական զօրքերի հետ միանալու մասին և Տրաժարվեցան պատերազմել ապստամբված արաբների հետ։ Արաբները մինչև անգամ այցելում են բէյի զօրքերին նրանց բանակի մէջ և նրանցից բամմաթիւրքներ են սատնում։

Փարիզի մէջ Տաւատացած են, որ Տունրնի ապստամբութիւնը անպատճառ կը ձգնշվի։ Մի և նոյն ժամանակ ամենքը Տամոզված են, որ ֆրանսիական նաւատորմիղը Տնակ է ապստամբութիւնը ձնշելուց յետոյ Տունրնը միջերկրականից միացնել Ֆրանսիայի հետ։

ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական թագուհին Տամոյնքների ժողովի սպիկեր Բրանդոին ընդհանուր բանի մէջ քանչանալ Ա յդ ընծան, նկատում է „Times“ լրագիրը, ապացուցանում է, որ թագուհին կատարութիւնը և երկիրը Տաւատում են սպիկերի վարմունքը պարլամենտական աշխատանքների միջոցին շրջանի ընթացքում Մի և նոյն ժամանակ այդ ընծան նախազգուշացնում է, որ Տարկաւոր դեպքում սպիկերին աւելի մեծ իշխանութիւն կը տալին „Daily News“ լրագրի կարծիքով, պատ-